ՀԱՅ ԱԶԳՆ ԻՐ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ Է ՀԶՈՐ

Հարցազրույց արցախյան ազատամարտի հերոս, «Մարտական Խաչ» առաջին աստիճանի շքանշանակիր, «Աշխատանք, Օրենք, Միասնություն (ԱՕՄ) կուսակցության, ինչպես նաեւ «Ազատամարտիկների - Կանանց Վետերանների Միություն հասարակական կազմակերպության, նախագահ **Միհրան Մովսիսյանի** հետ:

- Պարոն Մովսիսյան, առաջին հերթին խնդրում եմ հակիրճ ներկայացրեք թե՝ ԱՕՄ-ի եւ թե՝ ԱԿՎՄ-ի գործունեությունը, եթե կարելի է, անդրադարձեք թերթի հիմնադրման գաղափարին:

Նախ՝ որպես «Անվեհեր շաբաթաթերթի հիմնադիր, առաջին հերթին շնորհավորում եմ «Անվեհերի խմբագրական կոլեկտիվին, ԱՕՄ-ի եւ ԱԿՎՄ-ի անդամներին: Ցանկանում եմ, որ շաբաթաթերթն իր ինքնատիպ դեմքն ու դերն ունենա մերօրյա լրատվական այս թոհուբոհում:

2000թ. հոկտեմբերին, երբ ստեղծվեց ԱԿՎՄ-ն, մեր շուրջ համախմբվեցին՝ազատամարտիկներ, հազարավոր մարդիկ՝ հարող մեր կանոնադրական խնդիրներին ու նպատակներին: Երկամյա գործունեությունը դեռեւս չբոլորած կազմակերպությունը մինչեւ օրս իրականացրել է բազում միջոցառումներ, այդ թվում՝ բարեկարգել եւ հուշաքարեր է կանգնեցրել բախտի քմահաճույքին թողնված զոհված ազատամարտիկների շիրիմներին Արթիկում, Ստեփանավանում, Աշտարակում: 2001թ. միության անդամ զոհված եւ հաշմանդամ ազատամարտիկների հարազատները անվճար հանգստացել են Սեւանում, Ծաղկաձորում, Ջերմուկում: Բարեգործական միջոցառումներ ենք կազմակերպել թե՛ ՀՀ մարզերում եւ թե՛ Երեւանում: Միության անդամներից ոմանց հնարավորության սահմաններում տեղավորել ենք աշխատանքի՝ ըստ մասնագիտության: Միջոցառումներից բացի կային շատ ու շատ հարցեր՝ քաղաքական դաշտում գործունեություն ծավալելու համար: Այդ իսկ պատճառով 2001թ. հոկտեմբերի 28-ին հիմնադրեցինք ԱՕՄ կուսակցությունը, որի աշխատանքները լուսաբանելու համար որոշեցինք լույս ընծայել պաշտոնաթերթ, որը մեծ տեղ կհատկացնի մեր ազգին հուզող հարցերին: Ավելացնեմ, որ շաբաթաթերթը կլուսաբանի նաեւ թե՛ նախագահական, թե՛ Ազգային Ժողովի եւ թե՛ տեղական ինքնակառավարման մարմինների առաջիկա ընտրությունները:

- Իսկ այդ ընտրություններին կուսակցությունը կառաջադրի՞ իր թեկնածուներին:

ԱՕՄ-ը պատրաստվում է անցկացնել համագումար, որտեղ կհստակեցվի, թե նախագահական ընտրություններին մենք կառաջադրե՞նք մեր թեկնածուին, թե՝ ոչ, իսկ եթե ոչ, ապա մեր ձայնը կվստահենք արդեն գրանցված այն թեկնածուին, ով նվիրված է ազգին եւ պետությանը, իսկ պետական շահը բարձր է դասում անձնականից: ԱՕՄ-ը անմասն չի մնա նաեւ ԱԺ-ի եւ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին (ի դեպ նշեմ նաեւ, որ արդեն ՀՀ տարածքում ունենք ԱԿՎՄ անդամ 8 քաղաքապետ եւ 70 գյուղապետ):

- Ինչու՞ է ԱԿՎՄ-ի կարգախոսը դարձել նորաստեղծ կուսակցության անվանում:

Այո՛, «աշխատանք, օրենք, միասնությունն իսկապես ԱԿՎՄ-ի կարգախոսն է: Մենք մոտ երկու տարի է՝ այդ կարգախոսով ենք շարժվում, եւ վստահորեն կարող եմ ասել, որ այդ երեքն էլ այսօր կարեւոր են մեր իրականության համար, որոնց բացակայությունն ու անկատարությունը հանգեցնում են արտագաղթի, որի մասին պատեհ-անպատեհ շահարկում են՝ առանց հստակ ծրագրեր ու միջոցներ ձեռնարկելու: Կուսակցությունը բազմաթիվ միջոցառումներ է իրականացնում՝ կասեցնելու մերօրյա «սպիտակ եղեռնը : Օրինակ՝ ինչու՞ երբ 1945թ. Հայաստանի իրավիճակը ծանր էր քան այսօր, սփյուռքահայերը ներգաղթում էին հայրենիք՝ աջակցելու եւ սատարելու իրենց հայրենակիցներին: Իսկ այսօր ներգաղթի մասին ցավոք բարձրաձայն չենք կարող խոսել, որովհետեւ արտագաղթողների ստվար բազմության մոտ ներգաղթողների թիվը չնչին է:

Առանց **աշխատանքի** յուրաքանչյուր ոք իրեն թերի է զգում: Իսկ եթե Հայաստանում բնակչության գերակշռող մասն ապահովված լինի մշտական աշխատանքով՝ մանավանդ համապատասխան մասնագիտությամբ, մեծապես կկանխվի արտագաղթը:Սակայն այսօր առկա է ոչ ճիշտ կադրային քաղաքականությունը, որը մեծ հարված է հասցնում պետությանը: Աշխատանքի տեղավորվելն այսօր հիմնված է ընկերական հիմքերի եւ թիմային հասկացողությունների հիման վրա: Երբ **օրենքն** է թերի կամ լիարժեք չի կիրառվում, ինքնըստինքյան պետության հանդեպ հիասթափություն է առաջանում: Խոսելով **միասնության** մասին՝ ասեմ, որ հայ ազգն իր միասնության մեջ է հզոր. եթե 90-ականների սկզբին միասնությամբ մենք հաղթանակի հասանք, ապա ինչու՞ ենք հիմա պառակտվել: Պետք է միահամուռ ուժերով պաշտպանենք մեր հայրենիքը, արյան գնով ձեռք բերված անկախությունը, որովհետեւ միասնական բռունցք կազմած ժողովրդի համար ցանկացած դժվարություն հաղթահարելի է: Միասնությունը այն բացառիկ տարբերակներից է, որով կարելի է հզորացնել մեր երկիրը: Ռազմի դաշտում, եթե չլիներ միասնություն, ապա մենք հաղթանակ ու զինադադար չէինք կրի: Բազմակուսակցության գաղափարն այնժամ բարեբախտաբար խորթ էր մեզնից: Այսօր մեր մի բուռ Հայաստանի համար 130 կուսակցություն ունենալը կարծում եմ փրկության ճանապարհ չէ: Շատերին միգուցե անվստահություն է ներշնչում քաղաքական կուսակցությունների ու 2000-ից ավել հասարակական կազմակերպությունների թիվը, որոնցից յուրաքանչյուրը հայրենի երկրի հզորացման ուրույն ծրագիր ունի թղթի վրա, իսկ գործնականում պարզվում է, որ ոչ թե իրենց կանոնադրական նպատակներն են իրականացնում, այլ «պորտֆելների կռիվ են տալիս:

- Ովքե՞ր կարող են անդամագրվել ԱՕՄ կուսակցությունում:

Յուրաքանչյուր անհատ, ում հոգեհարազատ են մեր կանոնադրական նպատակներն ու խնդիրները, կարող է անդամագրվել ԱՕՄ-ում: Հետաքրքիր է, սակայն, այն փաստը, որ մեզ մոտ անդամագրվում են ՀՀ քաղաքացիներ՝ թե՛ ընդդիմադիր եւ թե՛ այլ կուսակցություններից:

- ԱՕՄ-ը համագործակցու՞մ է այլ կուսակցությունների հետ, կա՞ն հնարավոր դաշինքի տարբերակներ:

Դաշինք կազմելու առաջարկներ եղել են, սակայն կուսակցությունը դեռ չի հստակեցրել հնարավոր տարբերակները: Մենք գտնում ենք, որ կուսակցությունները չպետք է դաշինք կազմեն միայն ընտրությունների նախաշեմին: Անհրաժեշտ է համախմբվել մեկ գաղափարի շուրջ, որպեսզի նպաստենք հայրենի երկրի հզորացմանը: Մենք չենք շտապում դաշինք կնքել, քանի որ դեռ հստակ չենք տեսնում առաջնային կուսակցություններին եւ առավել եւս չենք տեսնում գաղափարապես հզոր կուսակցություն, որին կարելի է վստահել մեր հայրենիքի ապագան: Այդ հարցին մենք կանդրադառնանք գալիք համագումարի ընթացքում, որը տեղի կունենա տարեվերջին:

- Իսկ նորաստեղծ ԱՕՄ-ը վերջին ամիսներին ի՞նչ միջոցառումներ է իրականացրել:

Կուսակցության իրականացրած միջոցառումները շատ են, սակայն ուշագրավ է հատկապես այն, որ ԱՕՄ-ը ընդգրկվել է ԱԺ-ում ստեղծված «Սահմանադրական բարեփոխումների ժամանակավոր հանձնաժողովի կազմում եւ հանդես է եկել մի շարք առաջարկություններով: Մեր պատվիրակները մասնակցել են նաեւ 2002թ. Հայրենիք - Սփյուռք երկրորդ խորհրդաժողովին, որովհետեւ կուսակցությունը գտնում է, որ մեծ է Սփյուռքի դերը հայրենի երկրի հզորացման գործում: Պատերազմի դաշտում էլ առանց Սփյուռքի մեր հայրենակիցների, գուցե չկարողանայինք տեր կանգնել մեր հող ու ջրին: Համայն աշխարհով սփռված մեր ազգը մեծ ներդրում ունի ազատ ու անկախ Հայաստանի կայացման եւ հետագա զարգացման գործընթացում:

Հարցազրույցը վարեց
Քրիստինե Ղուկասյանը

Առաջին համարը
ԱԳԿԾԱՐ